սաղէմայ տաճարն, որոյ ներքեւ Քրիստոս առաքեալներով․ (Քրիստոս) աւանակի վերայ նստած, երկու ոտքն մի կողմից կախ արած՝ յԵրուսաղէմ կը մտնէ․ բազմութիւնք ժողովրդեան տաճարին ներսն պատուհաններու միջից գլուխնին դուրս հանած, զՔրիստոս կը դիտեն եւն․ եւն․ մինչեւ 14․ էջ պատկերներ են։

Ե․ էջին վերայ կայ մի հին յիշատակարան, որոյ վերի տողը մկրատով կտրուած է, ներքի տողի մէջ «Մարծպանս Մամիկոնէջէս» գրուած էր։

Պատկերաց վերջն կար այս յիշատակարանն։

«Եւ տեսայ զԱստուածաշունչ կենսատու Կարմիր աւետարանս՝ յաւեթեցաք ընդ հովանեաւ զօրութեան շնորհի սորա հաստատուն պայազատ՝ հայրապետութեան կրկնակի և եռակի կատարեալ արամբ վկայեալ զվաղուց ստուգաբանութիւն ի Սուրբ Աւետարանս գրեալ են և մեծ ստոյգ բանիցս որ ի բաբերարաց . . . (եղծուած) հաստատեալ կայր հաւատով ընկալայ . . . (եղծուած) առաւելեալ ով որ զՍուրբ Աւետարանս ի ձեռն առնու կարդալով կամ աւրինակելով կամ համբուրելով՝ լի սրտիւ Աստուած ողորմի ասէ թէ Տէր Աստուած հայրապետացն զմեղս նոցա թողու, և Աստուած զներելին թողու իւր միւս անգամ գալստեանն․ ամէն․ Ի թուին ՋԹԴ․ մայիսի Ժ»։

ՄԱՏԹԷՈՍԻ ՎԵՐՋԸ.—«. . . Վերստին ստացող Ս. Աստուածաշունչ Աւետարանիս զՂարսեցի Խաւճա Սաւարն որ ստացաւ զՍուրբ Աւետարանս ի հալալ ընչից և . . . վաստակէ յիշատակ իւր և բարի ծնողացն իւրոց՝ հաւրն Աստուածա . . . և մաւրն Կուլշատին, և եղբարցն Մաղիճանին և հանգուցեալ եղբարցն Սոլդանին և քերց Մուխալին, Խաթուն փաշին և Թամամին․ դարձեալ յիշեցէք զԽաւճա Սաւարն որ ի դառն և ի վիշտ ժամանակիս՝ յորում ամի շարժեալ էր ի վերայ ազգիս Հայոց անհնարին բարկութիւնն եւ առաւել սով